## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 673-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված «Մելկար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, հողամասի սեփականատեր Անդրանիկ Սուքիասյանի 2023 թվականի նոյեմբերի 1-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գնտվող Անդրանիկ Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0013-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (մնացող հողամաս) 0.0555 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Երևանյան խճուղի, 5-րդ նրբանցք N 3 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (առանձնացվող հողամաս) 0. 0195 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Երևանյան խճուղի, 5-րդ նրբանցք N 3/3 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 17
գ.Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 674-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՐՁԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 2-րդ և 3-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023թվականի նոյեմբերի 15-ի թիվ 87-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի և քաղաքացի Գեղամ Գուրգենի Միքայելյանի միջև 2002 թվականի մայիսի 16-ին կնքված հողամասի վարձակալության /սեղ. 1-2154/ պայմանագրի 4.6 կետը, որոշում եմ՝

1. Ուղղակի վաճառքի ձևով Գեղամ Գուրգենի Միքայելյանի ժառանգ Սրբուհի Համլետի Մարությանին օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան գյուղական համայնքի սեփականությունը հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական՝ 08112019-04-0047, տրված՝ 2019 թվականի նոյեմբերի 8-ին)՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող 04-065-0503-0203 կադաստրային ծածկագրով, 3.525 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը, հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 4 117 125 /չորս միլիոն հարյուր տասնյոթ հազար հարյուր քսանհինգ / Հայաստանի Հանրապետության դրամով:
2. Սրբուհի Մարությանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 17
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 675-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՐՁԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 2-րդ և 3-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023թվականի նոյեմբերի 15-ի թիվ 86-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի և քաղաքացի Գեղամ Գուրգենի Միքայելյանի միջև 2002 թվականի մայիսի 16-ին կնքված հողամասի վարձակալության /սեղ. 1-2154/ պայմանագրի 4.6 կետը, ***որոշում եմ՝***

1. Ուղղակի վաճառքի ձևով Գեղամ Գուրգենի Միքայելյանի ժառանգ Սրբուհի Համլետի Մարությանին օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական՝ 04102023-04-0103, տրված՝ 2023 թվականի հոկտեմբերի 4-ին) և Փարաքար համայնքի Մերձավան գյուղում գտնվող 04-065-0503-0244 կադաստրային ծածկագրով, 18.2503 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը, հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 21 626 250 /քսանմեկ միլիոն վեց հարյուր քսանվեց հազար երկու հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամով:
2. Սրբուհի Մարությանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 17
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 676-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 8-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023թվականի նոյեմբերի 15-ի թիվ 88-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի և քաղաքացի Գեղամ Գուրգենի Միքայելյանի միջև 2002 թվականի մայիսի 16-ին կնքված հողամասի վարձակալության /սեղ. 1-2154/ պայմանագիրը և վարձակալ Գեղամ Միքայելյանի ժառանգ քաղաքացի Սրբուհի Համլետի Մարությանի կողմից ներկայացված գրավոր համաձայնությունը. ***որոշում եմ՝***

1. Քաղաքացի Գեղամ Միքայելյանի հետ 2002 թվականի մայիսի 16-ին կնքված հողամասի վարձակալության սեղ. 1-2154 պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) պայմանագրի 1–ին կետում «202.5135հա» թիվը փոխարինել՝ «180.7382» թվով.
2) պայմանագրի 3-րդ կետից հանել «3,525 հա 4-րդ կարգի վարելահող /կադաստրային ծածկագիր՝ 04-065-0503-0203/,» բառերը,
3) պայմանագրի 3-րդ կետում «32,5089 հա 4-րդ կարգի վարելահող /կադաստրային ծածկագիր 04-065-0503-0199/,» բառերը փոխարինել «2,5856 հա 4-րդ կարգի վարելահող /կադաստրային ծածկագիր՝ 04-065-0503-0246/, 11,673 հա 4-րդ կարգի վարելահող /կադաստրային ծածկագիր՝ 04-065-0503-0245/,» բառերով:

2. Սրբուհի Մարությանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 17
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 677-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշումամբ, հաշվի առնելով, որ հողամասը չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող, 0,0743 հեկտար մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ճանաչել համայնքային սեփականություն «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի հատակագծի հիման վրա:

2. Հողատարածքին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Ի. Գասպարյան փողոց 30/1 հողամաս:

3. 743 քառակուսի մետր մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխել, որպես բնակավայրերի, գործառնական նշանակությունը փոխել որպես հասարակական կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 20

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 678-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 295-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի օգոստոսի 28-ին տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-28082023-04-0081 որոշումը և քաղաքացի Աշոտ Պարսամի Վարդանյանի 2023 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 4152 դիմումը. ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 25-ի «Աշոտ Պարսամի Վարդանյանի, Ռիմա Վարազդատի Վարդանյանի, Նաիրա Աշոտի Վարդանյանի, Խաթուն Աշոտի Վարդանյանի, Նարինե Աշոտի Վարդանյանի, Պարսամ Աշոտի Վարդանյանի, Ռուբեն Պարսամի Վարդանյանի և Մանուկ Պարսամի Վարդանյանի հողային իրավունքները վերականգնելու և ինքնակամ շինությունների օրինականացման մասին» N 295-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1) որոշման վերնագրից և 1-ին կետից հանել «Նաիրա Աշոտի Վարդանյանի, Խաթուն Աշոտի Վարդանյանի, Նարինե Աշոտի Վարդանյանի, Պարսամ Աշոտի Վարդանյանի, Ռուբեն Պարսամի Վարդանյանի և Մանուկ Պարսամի Վարդանյանի» բառերը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 20
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 679-Ա

## ՀԱՐԱՋԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի բնակիչների դիմումները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներին ցուցաբերել 120 000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 20
գ.Փարաքար

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի*

*Փարաքար համայնքի ղեկավարի*

*2023 թվականի նոյեմբերի 20-ի*

*թիվ 679 -Ա որոշման*

Ցուցակ

Հարազատին կորցրած ընտանիքների դրամական օգնություն ստացողների

| Հ/հ | Ազգանուն, անուն, հայրանուն | հասցեն | Գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Ասատրյան Գառնիկ Օնիկի | Գ. Փարաքար | 40 000 |
| 2. | Հակոբյան Արգիշտի Նովիկի | Գ. Բաղրամյան | 40 000 |
| 3. | Մելիքսեթյան Հակոբ Միհրի | Գ. Մերձավան | 40 000 |
| | ընդամենը | | 120 000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Մանուկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 680-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-3-րդ ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 27-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023NJSGAS), Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի բնակիչ Պապիկ Արշավիրի Մաթևոսյանի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի N 4957 և N 4958 դիմումները, 1996 թվականի հուլիսի 16-ի առուվաճառքի պայմանագիրը, «ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2023 թվականի հոկտեմբերի 19-ին տրված հողամասի և շինության հատակագիծը, «ԽԱՉՎԱՀԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի սեպտեմբերի 26-ի եզրակացությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի օրինականացումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կատուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների

պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում. ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Պապիկ Արշավիրի Մաթևոսյանի (ծնված 18.01.1974 թվականին), սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղում գտնվող գույքային միավորների՝ 1997 թվականին կառուցված 184,4 քառակուսի մետր բնակելի տան և 0.1 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:
2. Քաղաքացի Պապիկ Արշավիրի Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղում գտնվող՝ 04-082-0041-0018 կադաստրային ծածկագով, 0.1 հեկտար մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 0.0174 հեկտար հողամասն անհատույց հատկացնել իրեն՝ սեփականության իրավունքով: 174 քառակուսի մետր մակերեսով հողամասն առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի չափի 17,4 տոկոսն է:
3. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղում գտնվող Պապիկ Արշավիրի Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-082-0041-0018 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2007 թվականին կառուցված 51,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 2007 թվականին կառուցված 10,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով թռչնանոցը, 2007 թվականին կառուցված 30.2 քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:
4. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր ավտոտնակի, թռչնանոցի և պարսպի համար կազմում է 1181,4 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 108 806,94 (հարյուր ութ հազար ութ հարյուր վեց դրամ իննսունչորս լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:
5. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Հողատարածքին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Պտղունք, Վ. Տերյան փողոց, թիվ 33 բնակելի տուն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում: 8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 21

գ. Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 681-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխով և Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 13-Ն հրամանի 11 կետով. ***Որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի (3.1-11) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2023 թվականի դեկտեմբերի 26-ին ժամը 10:00-ին անցկացնել մրցույթ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետի (3.1-15) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2023 թվականի դեկտեմբերի 26-ին ժամը 11:30-ին անցկացնել մրցույթ:
3. Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գայանե Մանուկյանին՝ կազմել մրցույթների հայտարարությունների տեքստը և այն հրապարակել azdarar.am ինտերնետային կայքում:
4. Մրցույթների անցկացման տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ Աիդա Սարգսյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 21
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 682-Ա

ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի բնակիչների դիմումները՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներին ցուցաբերել 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2021 թ. նոյեմբերի 21
գ.Փարաքար

*Հավելված*

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի*

*Փարաբար համայնքի ղեկավարի*

*2023 թվականի նոյեմբերի 21-ի*

*թիվ 682-Ա որոշման*

Ցուցակ

Հարազատին կորցրած ընտանիքիների դրամական օգնություն ստացողների

| Հ/հ | Ազգանուն, անուն, հայրանուն | հասցեն | Գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Շահվերդյան Սերոժ Պետրոսի | Գ. Պտղունք | 40 000 |
| 2. | Եղիազարյան Աշոտ Արամի | Գ. Պտղունք | 40 000 |
| | ընդամենը | | 80 000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Մանուկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 683-Ա

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի N 06112023-04-0032 և N 15112023-04-0080 վկայականները և հողամասի սեփականատեր Գոռ Միրզոյանի 2023 թվականի նոյեմբերի 16-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Մայրաքաղաքային փողոց N 167 և Մայրաքաղաքային փողոց N 167/1 հասցեներում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 167 առևտրի սրահ:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 22
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 684-Ա

## ԿԱՐԻՆԵ ԻՇԽԱՆԻ ԱՐԱՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբերի 19-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 16-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023FYATRX), հողամասի սեփականատեր Կարինե Իշխանի Արամյանի 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 5104 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Երիտասարդական փողոց թիվ 8 հասցեում գտնվող Կարինե Իշխանի Արամյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-0029-0057 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 53,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 13,1 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 75,3 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 34,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 3,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 10,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 1969 դրամ, 1 քառակուսի մետր օժանդակ շինությունների, ծածկի և պարսպի համար կազմում է 1181,4 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 267 153,92 (երկու հարյուր վաթսունյոթ հազար հարյուր հիսուներեք դրամ իննսուներկու լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի 900325176155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 22

գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 685-Ա

## ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի նոյեմբերի 10-ին «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, հողամասի համասեփականատեր Ազատ Մանավազյանի 2023 թվականի նոյեմբերի 13-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի վարչական սահմաններում գտնվող Ազատ Մանավազյանին և Արուսյակ Մանավազյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-030-0038-0028 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (առանձնացվող հատված 1) 0.125 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Բաղրամյան, Խ. Աբովյան փողոց N 2/1 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (առանձնացվող հատված 2) 0.2037 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Բաղրամյան, Խ. Աբովյան փողոց N 2 բնակելի տուն:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 22
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 686-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի նոյեմբերի 10-ին «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, հողամասի սեփականատեր Արմեն Գալստյանի 2023 թվականի նոյեմբերի 13-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող Արմեն Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0124-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին 0.0311 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Գ. Նժդեհի փողոց N 19 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին 0. 0312 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Գ. Նժդեհի փողոց N 19/1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 22
գ.Փարաքար